



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՈՐՈՇՈՒՄ

----- 2017 թվականի №---Ա
ք.Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 16-Ի №88Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը և հաշվի առնելով «ԱՄԲԵՐԴ ՀԷԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2017 թվականի մայիսի 23-ի, հուլիսի 31-ի օգոստոսի 31-ի գրությունները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի ապրիլի 16-ի «ԱՄԲԵՐԴ ՀԷԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Ամբերդ ՀԷԿ-3» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №88Ա՝

1) որոշման մեջ «մինչև 2017 թվականի դեկտեմբերի 20-ը» բառերը փոխարինել «մինչև 2017 թվականի սեպտեմբերի 13-ը» բառերով.

2) որոշման 2-րդ կետով հաստատված՝ «ԱՄԲԵՐԴ ՀԷԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Ամբերդ ՀԷԿ-3» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0538 լիցենզիայի պայմանների 6-րդ և 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է Լիցենզիայով սահմանված ժամկետում կառուցել 9830 կՎտ հաշվարկային հզորությամբ «Ամբերդ ՀԷԿ-3» փոքր հիդրոէլեկտրակայանը, արտադրել էլեկտրական էներգիա (հզորություն) ու այն վաճառել Շուկայի կանոններով:»,

«9. «Ամբերդ ՀԷԿ-3» փոքր հիդրոէլեկտրակայանի փաստացի տեղակայված հզորությունը 10297.2 կՎտ է, իսկ էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունն իրականացվում է հետևյալ սարքավորումներով՝

- 1) հիդրոտուրբին №1՝ Ֆրենսիս տիպի, 2868 կՎտ, 2012թ.,
- 2) գեներատոր №1՝ SEH 710 SA, 2723.4 կՎտ, 2012թ.,
- 3) հիդրոտուրբին №2՝ Ֆրենսիս տիպի, 2868 կՎտ, 2012թ.,
- 4) գեներատոր №2՝ SEH 710 SA, 2723.4 կՎտ, 2012թ.,
- 5) հիդրոտուրբին №3՝ Ֆրենսիս տիպի, 2868 կՎտ, 2012թ.,
- 6) գեներատոր №3՝ SEH 710 SA, 2723.4 կՎտ, 2012թ.,
- 7) հիդրոտուրբին №4՝ Պելտոն տիպի, 2127 կՎտ, 2013թ.,
- 8) գեներատոր №4՝ SEH 710 S8, 2274.3 կՎտ, 2013թ.:»:

2. «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերությանն ազատել 2015 թվականի հունիսի 16-ի №652-6027 գրությամբ ներկայացված, այնուհետև 2016 թվականի հունիսի 3-ի №652-4622 և 2017 թվականի ապրիլի 6-ի №652-3419 գրություններով երկարաձգված №ԲԵՆ15/77-01 երաշխիքի համաձայն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի առջև ստանձնած քսանչորս միլիոն հինգ հարյուր յոթանասուներեք հազար դրամ երաշխիքային պարտավորությունից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ